

Խ-343-05.11.2019,17.03.2020-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-123-Ն օրենքի (այսուհետ՝ «Օրենք») նախաբանը «սպառողների» բառից հետո լրացնել «և հաճախորդների» բառերով, իսկ «ավելացումը» բառից հետո լրացնել «, ֆինանսական ոլորտում սպառողների և հաճախորդների իրավունքների պաշտպանության համակարգի ստեղծումը, որին պարտադիր մասնակցում են սույն օրենքով նախատեսված կազմակերպությունները» բառերով:

Հոդված 2.

1. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) **Կազմակերպություն**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից տրամադրված լիցենզիա ունեցող անձ (բացառությամբ արտարժույթի առքուվաճառքի սակարկությունների լիցենզիա և վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի ու քլիրինգի լիցենզիա ստացած անձանց, այն ապահովագրական բրոքերների, որոնք ծառայություններ են մատուցում բացառապես ապահովագրական ընկերություններին, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների), ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Բյուրո (այսուհետ՝ Բյուրո).»:

2. Նույն մասի 5-րդ կետում՝

ա. առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«**հաճախորդ**՝ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, այդ թվում՝ ֆինանսական կազմակերպությանը պարտավորությունների ապահովման միջոց տրամադրած անձ, որը ներկայացրել է Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կամ ապահովման միջոցի հետ կապված պահանջ:»,

բ. երկրորդ նախադասությունը «տուժողի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև վնասների հատուցման և (կամ) դրա հետադարձ պահանջի (սուբրոգացիա)» բառերով:

3. Նույն մասի 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«10) **իրավասու դատարան**՝

ա. հաճախորդի բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան.

բ. հաճախորդի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե հաճախորդն իրավաբանական անձ է, իսկ հաճախորդի՝ օտարերկրյա իրավաբանական անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաձյուղ լինելու դեպքում՝ մասնաձյուղի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան.»::

4. Նույն մասը լրացնել նոր 11-րդ կետով՝

«11) **անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ**՝ Հաշտարարին դիմելու պահին Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անձ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված Կազմակերպությունների:»:

Հոդված 3.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը «ներկայացված» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարկային տեղեկատվության վերաբերյալ կամ դրա հետ կապված» բառերով:

Հոդված 4.

Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով՝

«5. Սույն հոդվածի իմաստով հաճախորդը համարվում է Կազմակերպությանը բողոք-պահանջ ներկայացրած նաև այն դեպքում, երբ հաճախորդի համաձայնությամբ հաճախորդի բողոք-պահանջը ներկայացրել է Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը: Կազմակերպությանը Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջոցով հաճախորդի բողոք-պահանջների ներկայացման կարգը սահմանում է Խորհուրդը: Այդ կարգը հրապարակվում է Հաշտարարի գրասենյակի պաշտոնական ինտերնետային կայքում:»:

Հոդված 5.

Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «կամ 2-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառով:

Հոդված 6.

1. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում՝

ա. 1-ին կետը «անունը» բառից հետո լրացնել «(անվանումը)» բառով.

բ. 2-րդ կետը «բնակության» բառից հետո լրացնել «(գտնվելու վայրի)» բառերով.

գ. 4-րդ կետում «, վարկային բյուրոյի դեմ ներկայացված պահանջի դեպքում գույքային պահանջի չափը նշվում է, եթե առկա է գույքային պահանջ» բառերը փոխարինել «(առկայության դեպքում)» բառերով.

դ. լրացնել նոր 7.1-ին կետ՝

«7.1) իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հաճախորդի դեպքում՝ հայտարարություն հաճախորդի՝ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու պահին Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսանալու և Հաշտարարի գրասենյակին տրված համաձայնություն իր՝

միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու մասին տեղեկատվությունը հարկային մարմնից ստանալու վերաբերյալ, կամ հարկային մարմնի կողմից տրված տեղեկանքն իր միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ.».

ե. լրացնել նոր 9.1-ին կետը՝

«9.1) ֆիզիկական անձ հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրեր հաճախորդի դեպքում՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հաճախորդի պետական գրանցման փաստաթղթի պատճենը կամ անհատականացնող համարը.».

զ. 10-րդ կետը «հաճախորդի» բառից հետո լրացնել «, իսկ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում՝ ընկերության անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձի» բառերով:

2. Նույն հոդվածի 2-րդ մասի «լիազորագրի պատճենը» բառերը փոխարինել «լիազորագիրը, ինչպես նաև հաճախորդի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը» բառերով:

3. Նույն հոդվածի 3-րդ մասը «չափը» բառից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերով:

Հոդված 7.

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում՝

ա. 3-րդ կետը «վարույթում» բառից հետո լրացնել «կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից» բառերով.

բ. 9-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով.

գ. լրացնել նոր 10-րդ և 11-րդ կետերը՝

«10) իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու պահին չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտ.

11) իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը չի պահպանել սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7.1-ին կետով սահմանված պահանջը:».

Հոդված 8.

Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացնում Կազմակերպության բացատրությունները ստանալուց կամ սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետը լրանալուց հետո՝ քսանչորս աշխատանքային օրվա ընթացքում: Առանձնապես բարդ գործի պարագայում Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է սույն մասով նախատեսված քսանչորսօրյա ժամկետը իր որոշմամբ երկարաձգել ևս տասնչորս աշխատանքային օրով:»

2) լրացնել նոր 9-րդ մասը՝

«9. Ֆինանսական համակարգի հաշտարարը պահանջի քննության համար անհրաժեշտ տեղեկություններ կամ նյութեր ստանալու համար կարող է դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու իրավաբանական անձանց: Այդ անձինք պարտավոր են պատասխանել Ֆինանսական համակարգի հաշտարարի դիմում-հարցումներին և ներկայացնել իրենց իրավասություններից բխող պահանջվող տեղեկությունները դրանք ստանալու պահից 7

աշխատանքային օրվա ընթացքում: Ֆինանսական համակարգի հաշտարարն իրավունք ունի ստանալ սույն մասով սահմանված տեղեկությունները, եթե դրանք չեն հանդիսանում պետական կամ ծառայողական գաղտնիք: Հարկային մարմնի կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին տեղեկատվությունը տրամադրվում է էլեկտրոնային համակարգի միջոցով՝ առցանց հարցումներին ավտոմատ պատասխանելու եղանակով (այդպիսի համակարգի առկայության դեպքում):»:

Հոդված 9.

1. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4.1-ին կետով՝

«4.1) կողմերը հաշտվել են՝ կնքվել է հաշտության համաձայնագիր կամ հաճախորդը դիմում է ներկայացրել հաշտության համաձայնության գալու մասին.»:

2. Նույն մասի 5-րդ կետը «մահացել է» բառերից հետո լրացնել «կամ ճանաչվել է մահացած կամ անհայտ բացակայող, իսկ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում՝ լուծարվել է» բառերով:

3. Նույն մասի 6-րդ կետը «լուծարվել է» բառերից հետո լրացնել «կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվել է» բառերով:

Հոդված 10.

Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Պահանջի քննության արդյունքներով Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացնում պահանջը բավարարելու կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու մասին և ոչ ուշ, քան հաջորդ օրը ծանուցում որոշման մասին՝ համապատասխան ծանուցման եղանակով ներկայացնելով որոշումը:».

2) 4-րդ մասում՝

ա. առաջին պարբերության «առաքելու» բառը փոխարինել «ծանուցելու» բառով.

բ. երկրորդ պարբերության «Երեսուն աշխատանքային օրը լրանալուց հետո» բառերը փոխարինել «Հաճախորդի կողմից որոշման հետ համաձայնելու մասին գրությունը ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ չհամաձայնելու դեպքում՝ երեսուն աշխատանքային օրը լրանալուց հետո» բառերով:

Հոդված 11.

Օրենքը լրացնել նոր 14.1-ին հոդվածով՝

«Հոդված 14.1. Հաճախորդի և Կազմակերպության հաղորդակցումը Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ

1. Հաճախորդը պահանջ ներկայացնելիս այդ պահանջի մեջ նշում է Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ հաղորդակցման եղանակի մասին, իսկ այդպիսի նշում կատարված չլինելու դեպքում՝ հաղորդակցումը տեղի է ունենում սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված Խորհրդի կողմից սահմանված կարգով:

2. Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ հաղորդակցման եղանակն իրենից ներկայացնում է սույն օրենքով սահմանված փաստաթղթերը կամ տեղեկությունները Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաճախորդին ներկայացնելու ձևը, որը կարող է լինել էլեկտրոնային, փոստով առաքման կամ հաճախորդի համաձայնությամբ՝ այլ միջոցով: Հաճախորդի կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ հաղորդակցման կարգը սահմանում է Խորհրդը: Այդ կարգը հրապարակվում է Հաշտարարի գրասենյակի պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Ֆինանսական համակարգի հաշտարարի հաղորդակցումը Կազմակերպությունների հետ իրականացվում է էլեկտրոնային կամ այլ եղանակով՝ Խորհրդի սահմանած կարգով:»:

Հոդված 12.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (բ) ենթակետը «լրացուցիչ» բառից հետո լրացնել «մասնակցության» բառով:

Հոդված 13.

Օրենքի ամբողջ տեքստում «պարտադիր վճար» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «մասնակցության վճար» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով, «վճար» բառը և դրա հոլովածները փոխարինել «մասնակցության վճար» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով, բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին կետի:

Հոդված 14.

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը «ծայներով» բառից հետո լրացնել «՝ գործող Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեք և ոչ ուշ, քան երկու ամիս առաջ և ուժի մեջ է մտնում գործող Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունների ավարտի հաջորդ օրվանից, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 15.

Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝

«4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում Ֆինանսական համակարգի հաշտարարը նշանակվում է Խորհրդի կողմից սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունները վաղաժամկետ դադարելուց հետո 15 օրվա ընթացքում:»:

Հոդված 16.

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը «կարգը» բառից հետո լրացնել «, սոցիալական ապահովության ծախսերը և դրանց հատկացման կարգը, Գրասենյակի կառավարչի տեղակալի հաստիքը, որին նշանակված անձը չի կարող իրականացնել Ֆինանսական համակարգի հաշտարարի մասնագիտական գործունեություն» բառերով:

Հոդված 17.

Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հոդված 26. Խորհրդի ձևավորումը

1. Խորհուրդը կազմված է յոթ անդամից:
2. Խորհրդի անդամներին նշանակում է՝
 - 1) մեկին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը.
 - 2) մեկին՝ Կենտրոնական բանկի խորհուրդը.
 - 3) մեկին՝ բանկերի միությունը (միությունները), մեկին՝ վարկային կազմակերպությունների միությունը (միությունները), մեկին՝ ապահովագրական ընկերությունների միությունը (միությունները), մեկին՝ մյուս Կազմակերպությունների միությունները.
 - 4) մեկին՝ սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները:
3. Խորհրդի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով:
4. Խորհրդի նոր անդամը պետք է նշանակվի խորհրդի անդամի լիազորությունների դադարումից ոչ շուտ, քան երեք, և ոչ ուշ, քան երկու ամիս առաջ սույն հոդվածով սահմանված կարգով, բացառությամբ սույն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:
5. Եթե սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Կազմակերպության միություն(ներ)ը և (կամ) սպառողների իրավունքների պաշտպանության միությունները չեն նշանակում Խորհրդի իրենց անդամին, ապա վերջիններիս նշանակում է Կենտրոնական բանկի խորհուրդը՝ մեկ ամսվա ընթացքում:
6. Խորհրդի անդամների նշանակման իրավունք ունեն այն Կազմակերպությունների միությունները և սպառողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունները, որոնց պետական գրանցման օրվանից անցել է առնվազն 5 տարի:
Կազմակերպությունների միությունների և սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից Խորհրդի անդամների նշանակման կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:»:

Հոդված 18.

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը «ժամկետով» բառից հետո լրացնել «, բայց ոչ ավել, քան մինչև նրա լիազորությունների ժամկետի ավարտը» բառերով:

Հոդված 19.

Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝
«2. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում Խորհրդի անդամը նշանակվում է սույն օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նախորդ Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելուց հետո 15 օրվա ընթացքում:»:

Հոդված 20.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «Կազմակերպությունների» բառից հետո լրացնել «տեսակների» բառով:

Հոդված 21.

1. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում՝

ա. 2-րդ կետը «կազմակերպություններ» բառից հետո լրացնել «(բացառությամբ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների)» բառերով.

բ. լրացնել նոր 2.1-ին կետով`

«2.1. Կենտրոնական դեպոզիտարիա` 140 000 ՀՀ դրամ.».

գ. 4-րդ կետը «բրոքերներ» բառից հետո լրացնել «, բացառությամբ այն ապահովագրական բրոքերների, որոնք ծառայություններ են մատուցում բացառապես ապահովագրական ընկերություններին» բառերով:

2. Նույն հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ`

«Ընդ որում` Կազմակերպության լիցենզիան մինչև ընթացիկ եռամսյակի առաջին ամսվա 20-ը դադարեցվելու դեպքում Կազմակերպությունը չի վճարում այդ եռամսյակի համար վճարման ենթակա մասնակցության վճարները: Ընթացիկ եռամսյակի առաջին ամսվա 20-ից հետո Կազմակերպության լիցենզիան դադարեցվելու դեպքում այդ եռամսյակի համար մասնակցության վճարների վճարման պարտավորությունը չի դադարում, իսկ այդ եռամսյակի համար արդեն իսկ վճարված մասնակցության վճարները չեն վերադարձվում:»:

3. Նույն հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով`

«6. Պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը և Կենտրոնական բանկի խորհուրդը համատեղ սահմանում են սույն հոդվածով սահմանված մասնակցության վճարների և սույն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տոկոսների մասով ժամկետանց պարտավորությունների հավաքագրման, հաշվառման և դուրսգրման կարգը:»:

Հոդված 22.

Օրենքի 36-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով`

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է Կազմակերպության լիցենզիայի դադարման օրվանից:»:

Հոդված 23.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված Խորհրդի անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև 2021 թվականի հուլիսի 01-ը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջին անգամ նշանակված Խորհրդի անդամներն Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակվում են հետևյալ ժամկետներով`

1) Հայաստանի Հանրապետության կառավարության և Կենտրոնական բանկի, սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից` երեք տարի ժամկետով.

2) Բանկերի և ապահովագրական ընկերությունների միությունների կողմից` երկու տարի ժամկետով.

3) Վարկային կազմակերպությունների և այլ Կազմակերպությունների միությունների կողմից` մեկ տարի ժամկետով:

4. Հետագայում ընտրվող Խորհրդի բոլոր անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով:

5. Կենտրոնական բանկի խորհուրդը սահմանում է Կազմակերպությունների միությունների և սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից Խորհրդի անդամների նշանակման կարգը մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը:

6. Գրասենյակի հոգաբարձուների խորհուրդը Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով և 14.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կարգը (կարգերը) ընդունում է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը:

7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կենտրոնական դեպոզիտարիան սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրը ներառող ընթացիկ եռամսյակի համար մասնակցության վճարի չափաբաժնի ամբողջ գումարը վճարում է մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ը՝ տվյալ եռամսյակի չափաբաժնի հետ միասին: Հետագայում Կենտրոնական դեպոզիտարիան մասնակցության վճարները կատարում է օրենքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՆԱԽԱԳԾՈՒՄ_ԿԱՏԱՐԿԱԾ_ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ»

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՍՄԱՆԻ ՀԱՄԱՆՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՍՄԱՆԻ
ՀԱՆՄԵՆԵՐՍՄԱՆԻ ՀԱՆՈՒՆԵՐՍ**

Հոդված 1.

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-123-Ն օրենքի (այսուհետ՝ «Օրենք») նախաբանը «սպառողների» բառից հետո լրացնել «և հաճախորդների» բառերով, իսկ «ավելացումը» բառից հետո լրացնել «, ֆինանսական ոլորտում սպառողների և հաճախորդների իրավունքների պաշտպանության համակարգի ստեղծումը, որին պարտադիր մասնակցում են սույն օրենքով նախատեսված կազմակերպությունները» բառերով:

Հոդված 2.

2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ~~կետում~~ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) Կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ կենտրոնական բանկ) կողմից տրամադրված լիցենզիա ունեցող անձ (բացառությամբ արտարժույթի առքուվաճառքի սակարկությունների լիցենզիա և վճարային գործարքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի ու քլիրինգի լիցենզիա ստացած անձանց, այն ապահովագրական բրոքերների, որոնք ծառայություններ են մատուցում բացառապես ապահովագրական ընկերություններին, ~~ինչպես նաև~~ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների), ~~ինչպես նաև~~ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Բյուրո (այսուհետ՝ Բյուրո).»: ~~«(բացառությամբ արտարժույթի առքուվաճառքի սակարկությունների լիցենզիա և վճարային գործարքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի ու քլիրինգի լիցենզիա ստացած անձանց, ~~ինչպես նաև~~ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Բյուրո (այսուհետ՝ Բյուրո))» բառերը փոխարինել «(բացառությամբ արտարժույթի առքուվաճառքի սակարկությունների լիցենզիա և վճարային գործարքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի ու քլիրինգի լիցենզիա ստացած անձանց), ~~ինչպես նաև~~ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող~~

պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Բյուրո (այսուհետ՝ Բյուրո), արժեթղթավորման ֆոնդ)» բառերով:

4.3. Նույն մասի 5-րդ կետում՝

ա. առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ «**հաճախորդ՝ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, այդ թվում՝ ֆինանսական կազմակերպությանը պարտավորությունների ապահովման միջոց տրամադրած անձ, որը ներկայացրել է Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կամ ապահովման միջոցի հետ կապված պահանջ:**»,

բ. երկրորդ նախադասությունը «տուժողի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև վնասների հատուցման և (կամ) դրա հետադարձ պահանջի (սուբրոգացիա)» բառերով:

4. Նույն մասի 10-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետովը շարադրել նոր խմբագրությամբ.

5. «10) իրավասու դատարան՝

ա. հաճախորդի բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան.

բ. հաճախորդի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան,

եթե հաճախորդն իրավաբանական անձ է, իսկ հաճախորդի՝ օտարերկրյա իրավաբանական անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաձյուղ լինելու դեպքում՝ մասնաձյուղի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան.»::

6.5. Նույն մասը լրացնել նոր 11-րդ կետով՝

«11) **անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ՝ Հաշտարարին դիմելու պահին Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված կամ հաշվառված և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անձ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն հարկման հատուկ համակարգերից որևէ մեկով հարկվող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ կամ օտարերկրյա իրավաբանական անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաձյուղ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված ֆինանսական կազմակերպությունների Կազմակերպությունների:**»:

Հոդված 3.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը «ներկայացված» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարկային տեղեկատվության վերաբերյալ կամ դրա հետ կապված» բառերով:

Հոդված 4.

Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով՝

«5. Սույն հոդվածի իմաստով հաճախորդը համարվում է

Կազմակերպությանը բողոք-պահանջ ներկայացրած նաև այն դեպքում, երբ հաճախորդի համաձայնությամբ հաճախորդի բողոք-պահանջը ներկայացրել է ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը: Կազմակերպությանը ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջոցով հաճախորդի

բողոք-պահանջների ներկայացման կարգը սահմանում է Խորհուրդը: Այդ կարգը հրապարակվում է Հաշտարարի գրասենյակի պաշտոնակալին ինտերնետային կայքում:»:

Հոդված 5.

Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «կամ 2-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառով:

Հոդված 6.

7.4. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում`

ա. 1-ին կետը «անունը» բառից հետո լրացնել «(անվանումը)» բառով.

բ. 2-րդ կետը «բնակության» բառից հետո լրացնել «(գտնվելու վայրի)» բառերով.

գ. 4-րդ կետում «, վարկային բյուրոյի դեմ ներկայացված պահանջի դեպքում գույքային պահանջի չափը նշվում է, եթե առկա է գույքային պահանջ» բառերը փոխարինել «(առկայության դեպքում)» բառերով.

դ. լրացնել նոր 7.1-ին կետ`

«7.1) իրավաբանական անձ կամ անհատ ~~ծեռնարկատիրոջ~~ ծեռնարկատեր հաճախորդի դեպքում` հայտարարություն հաճախորդի` Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու պահին այն մասին, որ հաճախորդը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն միկրոծեռնարկատիրության սուբյեկտ հանդիսանալու և Հաշտարարի գրասենյակին տրված համաձայնությունը իր` միկրոծեռնարկատիրության սուբյեկտ համարվելու մասին տեղեկատվությունը հարկային մարմնից ստանալու վերաբերյալ, կամ հարկային մարմնի կողմից տրված տեղեկանքն իր միկրոծեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հարկման հատուկ համակարգերից որևէ մեկով հարկվող».

ե. լրացնել նոր 9.1-ին կետ`

«9.1) Ֆիզիկական անձ հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ իրավաբանական անձի կամ անհատ ~~ծեռնարկատիրոջ~~ ծեռնարկատիրեր հաճախորդի դեպքում` իրավաբանական անձի կամ անհատ ~~ծեռնարկատիրոջ~~ ծեռնարկատեր հաճախորդի պետական գրանցման փաստաթղթի պատճենը կամ անհատականացնող համարը.».

զ. 10-րդ կետը «հաճախորդի» բառից հետո լրացնել «, իսկ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում` ընկերության անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձի» բառերով:

8.5. Նույն հոդվածի 2-րդ մասը ~~«պատճենը» բառից հետո լրացնել «,~~ ~~ինչպես նաև հաճախորդի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը» բառերով~~ «լիազորագրի պատճենը» բառերը փոխարինել «լիազորագիր, ինչպես նաև հաճախորդի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը» բառերով:

9.6. Նույն հոդվածի 3-րդ մասը «չափը» բառից հետո լրացնել ~~«կամ հնարավոր գույքային պահանջի չափը~~ (առկայության դեպքում)» բառերով:

Հոդված 7.

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում`

ա. 3-րդ կետը «վարույթում» բառից հետո լրացնել «կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից» բառերով.

բ. 9-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով.

գ. լրացնել նոր 10-րդ և 11-րդ կետեր՝

«10) իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու պահին չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտ.

11) իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը չի պահպանել սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7.1-ին կետով սահմանված պահանջը:».

Հոդված 78.

Օրենքի 11-րդ հոդվածում **ի**

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացնում կազմակերպության բացատրությունները ստանալուց կամ սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետը լրանալուց հետո՝ քանչորս աշխատանքային օրվա ընթացքում: Առանձնապես բարդ գործի պարագայում Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է սույն մասով նախատեսված քանչորսօրյա ժամկետը իր որոշմամբ երկարաձգել ևս տասնչորս աշխատանքային օրով:»

2) ք-լրացնել նոր 9-12-րդ մասերով՝

«9. Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է կասեցնել պահանջի քննությունը ոչ ավել, քան 30 աշխատանքային օրով, եթե պահանջի քննությունն անհնար է իրականացնել առանց երրորդ անձից (այդ թվում՝ սույն հոդվածի 8-րդ մասով ներգրավված մասնագետից) ստացման ենթակա անհրաժեշտ տեղեկությունների կամ նյութերի: Պահանջի քննությունը կասեցնելու մասին որոշումը պետք է լինի հիմնավորված՝ հստակ մատնանշելով այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ է ստանալ, տվյալ պահանջի քննության համար այդ տեղեկությունների կարևորությունը, ինչպես նաև այն օբյեկտիվ պատճառները, որոնք անհնարին են դարձնում պահանջի քննությունը և լուծումը:

10. Հաշտարարը պահանջի քննությունը վերսկսելու մասին որոշում է կայացնում պահանջի քննության կասեցման համար հիմք հանդիսացող հանգամանքների վերանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշման կայացումից հետո՝ 30-րդ աշխատանքային օրը, և պահանջի քննության ժամկետների ընթացքը շարունակվում է պահանջի քննությունը վերսկսելու օրվան հաջորդող օրվանից:

11. Սույն հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով սահմանված որոշումների մասին Ֆինանսական համակարգի հաշտարարը ծանուցում է կողմերին՝ վերջիններիս կողմից ընտրված եղանակով:

«129. Ֆինանսական համակարգի հաշտարարը պահանջի քննության համար անհրաժեշտ տեղեկություններ կամ նյութեր ստանալու համար կարող է դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու իրավաբանական անձանց: Այդ անձինք պարտավոր են պատասխանել Ֆինանսական համակարգի հաշտարարի դիմում-հարցումներին և ներկայացնել իրենց իրավասություններից բխող պահանջվող տեղեկությունները դրանք ստանալու պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում: Ֆինանսական համակարգի հաշտարարն իրավունք ունի ստանալ սույն մասով սահմանված տեղեկությունները, եթե դրանք չեն հանդիսանում պետական կամ ծառայողական գաղտնիք: Հարկային մարմնի կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին տեղեկատվությունը տրամադրվում է էլեկտրոնային համակարգի

միջոցով՝ առցանց հարցումներին ավտոմատ պատասխանելու եղանակով (այդպիսի համակարգի առկայության դեպքում):»:

Հոդված 89.

4. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4.1-ին կետով՝ «4.1) կողմերը հաշտվել են՝ կնքվել է հաշտության համաձայնագիր կամ հաճախորդը դիմում է ներկայացրել հաշտության համաձայնության գալու մասին.»:

5. Նույն մասի 5-րդ կետը «մահացել է» բառերից հետո լրացնել «կամ ճանաչվել է մահացած կամ անհայտ բացակայող, իսկ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում՝ լուծարվել է» բառերով:

6. Նույն մասի 6-րդ կետը «լուծարվել է» բառերից հետո լրացնել «կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվել է» բառերով:

Հոդված 910.

Օրենքի 14-րդ հոդվածի՝

3) 1-ին մասում «փոստով առաքում որոշման մեկական օրինակ» բառերը փոխարինել «ծանուցում որոշման մասին՝ համապատասխան ծանուցման եղանակով ներկայացնելով որոշումը» բառերով և շարադրել նոր խմբագրությամբ.

4. «1. Պահանջի բնության արդյունքներով Ֆինանսական համակարգի հաշտարար որոշում է կայացնում պահանջը բավարարելու կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու մասին և ոչ ուշ, քան հաջորդ օրը ծանուցում որոշման մասին՝ վերջիններիս կողմից ընտրված համապատասխան ծանուցման եղանակով ներկայացնելով որոշումը:».

5.4) 4-րդ մասում՝

ա. առաջին պարբերության «առաքելու» բառը փոխարինել «ծանուցելու» բառով.

բ. երկրորդ պարբերության «Երեսուն աշխատանքային օրը լրանալուց հետո» բառերը փոխարինել «Հաճախորդի կողմից որոշման հետ համաձայնվելու մասին գրությունը գրությունը ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ չհամաձայնվելու դեպքում՝ երեսուն աշխատանքային օրը լրանալուց հետո» բառերով:

Հոդված 1011.

Օրենքը լրացնել նոր 14.1-ին հոդվածով՝

«Հոդված 14.1. Հաճախորդի և Կազմակերպության հաղորդակցումը Ֆինանսական համակարգի հաշտարարի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ

2.4. Հաճախորդը պահանջ ներկայացնելիս այդ պահանջի մեջ նշում է Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ հաղորդակցման եղանակի մասին, իսկ այդպիսի նշում կատարված չլինելու դեպքում՝ հաղորդակցումը տեղի է ունենում սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված կողմից սահմանված կարգով:

3.5. Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ հաղորդակցման եղանակն իրենից ներկայացնում է սույն օրենքով սահմանված փաստաթղթերը կամ տեղեկությունները Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաճախորդին ներկայացնելու ձևը, որը կարող է լինել էլեկտրոնային, փոստով առաքման կամ հաճախորդի համաձայնությամբ՝ համաձայնությամբ՝ այլ միջոցով:

Հաճախորդի կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ հաղորդակցման կարգը սահմանում է Խորհուրդը: Այդ կարգը հրապարակվում է Հաշտարարի գրասենյակի պաշտոնակալին ինտերնետային կայքում:

6. Ֆինանսական համակարգի հաշտարարի հաղորդակցումը Կազմակերպությունների հետ իրականացվում է էլեկտրոնային կամ այլ եղանակով՝ Խորհրդի սահմանված կարգով:»:

Հոդված 12.

4. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (բ) ենթակետը «լրացուցիչ» բառից հետո լրացնել «մասնակցության» բառով:

Հոդված 1113.

Օրենքի ամբողջ տեքստում «պարտադիր վճար» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «մասնակցության վճար» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով, «վճար» բառը և դրա հոլովածները փոխարինել «մասնակցության վճար» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով, բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին կետի:

Հոդված 1214.

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը «ծայներով» բառից հետո լրացնել «՝ գործող Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեք և ոչ ուշ, քան երկու ամիս առաջ և ուժի մեջ է մտնում գործող Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունների ավարտի հաջորդ օրվանից, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 1315.

Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝
«4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում Ֆինանսական համակարգի հաշտարարը նշանակվում է Խորհրդի կողմից սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունները վաղաժամկետ դադարելուց հետո 15 օրվա ընթացքում:»:

Հոդված 1416.

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը «կարգը» բառից հետո լրացնել «, սոցիալական ապահովության ծախսերը և դրանց հատկացման կարգը, Գրասենյակի կառավարչի տեղակալի հաստիքը, որին նշանակված անձը չի կարող իրականացնել Ֆինանսական համակարգի հաշտարարի մասնագիտական գործունեություն» բառերով:

Հոդված 1517.

Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝
«Հոդված 26. Խորհրդի ձևավորումը

2.7. Խորհուրդը կազմված է յոթ անդամից:

3.8. Խորհրդի անդամներին նշանակում է՝

1) մեկին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

2) մեկին՝ Կենտրոնական բանկի խորհուրդը.

3) մեկին՝ բանկերի միությունը (միությունները), մեկին՝ վարկային կազմակերպությունների միությունը (միությունները), մեկին՝ ապահովագրական ընկերությունների միությունը (միությունները), մեկին՝ մյուս Կազմակերպությունների միությունները.

4) մեկին՝ սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները՝:

~~4.9.~~ 4.9. Խորհրդի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով:

~~5.10.~~ 5.10. Խորհրդի նոր անդամը պետք է նշանակվի խորհրդի անդամի լիազորությունների դադարումից ոչ շուտ, քան երեք, և ոչ ուշ, քան երկու ամիս առաջ սույն հոդվածով սահմանված կարգով, բացառությամբ սույն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

~~6.11.~~ 6.11. Եթե սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Կազմակերպության միություն(ներ)ը և (կամ) սպառողների իրավունքների պաշտպանության միությունները չեն նշանակում Խորհրդի իրենց անդամին, ապա վերջիններիս նշանակում է Կենտրոնական բանկի խորհուրդը՝ մեկ ամսվա ընթացքում:

~~7.12.~~ 7.12. Խորհրդի անդամների նշանակման իրավունք ունեն այն Կազմակերպությունների միությունները և սպառողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունները, որոնց պետական գրանցման օրվանից անցել է առնվազն 5 տարի:

Կազմակերպությունների միությունների և սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից Խորհրդի անդամների նշանակման կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:»:

~~Հոդված 1618.~~

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը «ժամկետով» բառից հետո լրացնել «, բայց ոչ ավել, քան մինչև նրա լիազորությունների ժամկետի ավարտը» բառերով:

~~Հոդված 1719.~~

Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝
«2. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում Խորհրդի անդամը նշանակվում է սույն օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նախորդ Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելուց հետո 15 օրվա ընթացքում:»:

~~Հոդված 1820.~~

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «Կազմակերպությունների» բառից հետո լրացնել «տեսակների» բառով:

~~Հոդված 19.~~

~~Օրենքի 34-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ մասով՝
«8. Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի կողմից սույն օրենքով նախատեսված անձանց մատուցվող ծառայություններն անհատույց են և ազատված ավելացված արժեքի հարկից: Գրասենյակն ազատված է գրասենյակի օգտին Կազմակերպությունների կողմից մասնակցության վճարների մասով շահութահարկից:»:~~

Հոդված 2021.

4)4. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում՝

ա. 2-րդ կետը «կազմակերպություններ» բառից հետո լրացնել

«(բացառությամբ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների)» բառերով.

բ. լրացնել նոր 2.1-ին ~~2.3-րդ~~ կետերով՝

~~«2.1. վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններ՝ 140 000 ՀՀ դրամ.~~

~~2.2. Կենտրոնական դեպոզիտարիա՝ 140 000 ՀՀ դրամ.~~

~~2.3. արժեթղթավորման ֆոնդ՝ 140 000.»:~~

գ. 4-րդ կետը «բրոքերներ» բառից հետո լրացնել «, բացառությամբ այն ապահովագրական բրոքերների, որոնք ծառայություններ են մատուցում բացառապես ապահովագրական ընկերություններին» բառերով:

5)5. Նույն հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝

«Ընդ որում՝ Կազմակերպության լիցենզիան մինչև ընթացիկ եռամսյակի առաջին ամսվա 20-ը դադարեցվելու դեպքում Կազմակերպությունը չի վճարում այդ եռամսյակի համար վճարման ենթակա մասնակցության վճարները: Ընթացիկ եռամսյակի առաջին ամսվա 20-ից հետո Կազմակերպության լիցենզիան դադարեցվելու դեպքում այդ եռամսյակի համար մասնակցության վճարների վճարման պարտավորությունը չի դադարում, իսկ այդ եռամսյակի համար արդեն իսկ վճարված մասնակցության վճարները չեն վերադարձվում:»:

6)6. Նույն հոդվածը լրացնել նոր 6-րդ ~~և 7-րդ մասերն~~ավով՝

~~«6. Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր կնքած Կազմակերպությունների նկատմամբ Խորհրդի կողմից սահմանված պայմաններով կարող է կիրառվել սույն հոդվածով սահմանված մասնակցության վճարներից ցածր վճարներ: Ընդ որում՝ Խորհրդի սահմանած պայմաններին բավարարող բոլոր ֆինանսական կազմակերպությունների կամ կազմակերպությունների տեսակների նկատմամբ կիրառվում է միևնույն մոտեցումը:~~

76. Պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը և Կենտրոնական բանկի խորհուրդը համատեղ սահմանում են սույն հոդվածով սահմանված մասնակցության վճարների և սույն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տոկոսների մասով ժամկետանց պարտավորությունների հավաքագրման, հաշվառման և դուրսգրման կարգը:»:

Հոդված 2122.

Օրենքի 36-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է Կազմակերպության լիցենզիայի դադարման օրվանից:»:

Հոդված 2223.

a.8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

6.9. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված Խորհրդի անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև ~~2020~~ 2021 թվականի հուլիսի հունվարի 01-ը:

6.10. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջին անգամ նշանակված Խորհրդի անդամներն Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակվում են հետևյալ ժամկետներով՝

4.4) Հայաստանի Հանրապետության կառավարության և Կենտրոնական բանկի, սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից՝ երեք տարի ժամկետով.

5.5) Բանկերի և ապահովագրական ընկերությունների միությունների կողմից՝ երկու տարի ժամկետով.

6.6) Վարկային կազմակերպությունների և այլ կազմակերպությունների միությունների կողմից՝ մեկ տարի ժամկետով:

11. Հետագայում ընտրվող Խորհրդի բոլոր անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով:

12. Կենտրոնական բանկի խորհուրդը սահմանում է կազմակերպությունների միությունների և սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից Խորհրդի անդամների նշանակման կարգը մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը:

13. Գրասենյակի հոգաբարձուների խորհուրդը Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով և 14.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կարգը (կարգերը) ընդունում է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը:

14. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կենտրոնական դեպոզիտարիան սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրը ներառող ընթացիկ եռամսյակի համար մասնակցության վճարի չափաբաժնի ամբողջ գումարը վճարում է մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ր՝ տվյալ եռամսյակի չափաբաժնի հետ միասին: Հետագայում Կենտրոնական դեպոզիտարիան մասնակցության վճարները կատարում է օրենքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ Ի ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (<http://www.finance.am> <http://www.trade.am> <http://www.bank.am> <http://www.dra.am>) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Հոդվածը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	հանել 3-րդ ենթակետից առաջ «2.» թիվը՝ համապատասխանաբար խմբագրելով Նախագծի 2-րդ հոդվածի մասերի համարակալումը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Արկաղի Խաչատրյան	Նախագծի 2-րդ հոդված	Գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով <<վճարային գործարքների>> բառերը փոխարինել <<վճարային գործիքների>> բառերով և հանել << ինչպես նաև >> բառերը		Ընդունվել է
3.	Կառավարություն	Նախագծի 13-րդ հոդված	Պահպանել նախագծի հոդվածների հաջորդականությունը, 13-րդ հոդվածին հաջորդում է 15-րդ հոդվածը	Հոդվածների հաջորդականությունը պահպանված է	Ընդունվել է

4.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	ավելացնել «ավտոապահովագրողների բյուրո» հասկացությունը , քանի որ նոր խմբագրությամբ սահմանվող «կազմակերպություն» հասկացության շրջանակում չի ընդգրկվել այն	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մաս 11-րդ կետ	Փոխարինել «ֆինանսական կազմակերպությունների» բառերն «Կազմակերպությունների» բառով, քանի որ Օրենքի 2-րդ հոդվածում՝ որպես հիմնական հասկացություն, սահմանվում է ոչ թե ֆինանսական կազմակերպության, այլ կազմակերպության հասկացությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Կառավարություն	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով լրացվող 9.1-րդ մաս	Նախագծից հանել իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հաճախորդի պետական գրանցման փաստաթղթի պատճենը կամ անհատականացնող համարը ներկայացնելու պահանջը:	Չի ընդունվել , քանի որ ՊԵԿ-ից միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսանալու փաստի վերաբերյալ տեղեկատվություն հայցելու համար վերջինիս ներկայացվելու է նշված տեղեկատվությունը	Չի ընդունվել է
7.	Կառավարություն	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մաս	Հանել Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի «կամ հնարավոր գույքային պահանջի չափը»)» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Արկադի Խաչատրյան	Նախագծի 10-րդ հոդվածի 1) կետ	Հանել <<վերջիններիս կողմից ընտրված>> բառերը , քանի որ հաճախորդի կողմից կարող է նաև չընտրվել հաղորդակցման եղանակը:		Ընդունվել է

9.	Կառավարություն	Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 14.1-րդ հոդվածի 1-ին մաս	հստակեցնել, թե հաղորդակցության որ եղանակն է կիրառվելու այն դեպքում, երբ հաճախորդի պահանջի մեջ հաղորդակցության նախընտրելի եղանակը, այնուամենայնիվ, նշված չէ:	Ընդունվել է Սահմանվել է , որ նման դեպքերում հաղորդակցումը տեղի է ունենալու Խորհրդի սահմանած կարգով:	Ընդունվել է
10.	Կառավարություն	Նախագծի 13-րդ հոդված	Նախագծի անցումային դրույթներով կարգավորել այն հարցը, թե արդյոք առաջարկվող կարգավորումը տարածվում է ներկայումս գործող հաշտարարի վրա՝ հաշվի առնելով գործող հաշտարարի պաշտոնավարման ժամկետը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ըստ Նախագծի 23-րդ հոդվածի՝ 2021 թվականի հունվարի 1-ից հետո Խորհրդի անդամների լիազորությունները դադարելու են:	Առաջարկվող կարգավորումը տարածվում է ներկայումս գործող հաշտարարի վրա: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվել է 2021 թվականի հուլիսի 1-ը	Ընդունվել է հիմնական զեկուցողի որոշումը առաջարկի վերաբերյալ
11.	Կառավարություն	Նախագծի 17-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մաս	հստակեցնել՝ արդյոք Նախագծի 17-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումը կիրառվելու է 2021 թ. հունվարի 1-ից երեք ամիս առաջ, և Խորհրդի որ կազմն է ընտրելու Հաշտարարին:	Նախագծի 17-րդ հոդվածով հարցը կարգավորված է հստակ, այն գործելու է սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից սկսած: Հաշտարարին ընտրելու է Խորհրդի գործող կազմը, որի պաշտոնավարման ժամկետը սահմանվել է 2021 թվականի	Ընդունվել է հիմնական զեկուցողի որոշումը առաջարկի վերաբերյալ

				հուլիսի 1-ը	
12.	Կառավարություն	Նախագծի 17-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մաս	Նախագծի անցումային դրույթներում անհրաժեշտ է նախատեսել նշված կարգի ընդունման ժամկետը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:	Ընդունվել է, ժամկետը սահմանվել է	Ընդունվել է
13.	Կառավարություն	Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծից հանել «(բացառությամբ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների)» բառերը, քանի որ Նախագծով սահմանվող «կազմակերպություն» հասկացությունը չի ներառում վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունները:	Չի ընդունվել . Նշված բառերը պահպանվել են տարատեսակ մեկնաբանությունների ց խուսափելու համար	Չի ընդունվել
14.	Կառավարություն	Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետ	Նախագծի անցումային դրույթներում անհրաժեշտ է սահմանել, թե Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ինչ ժամկետում և որ տարվա համար պետք է կատարվի նախատեսվող 140 000 դրամի վճարումը:	Ընդունվել է. Նշված կարգավորումները տրվել են	Ընդունվել է
15.	Կառավարություն	Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ	Նախագծից հանել «, բացառությամբ այն ապահովագրական բրոքերների, որոնք ծառայություններ են մատուցում բացառապես ապահովագրական ընկերություններին», բառերը քանի որ վերջիններս արդեն իսկ	Չի ընդունվել . Նշված բառերը պահպանվել են տարատեսակ մեկնաբանությունների ց խուսափելու համար	Չի ընդունվել

			ներառվում են Նախագծով սահմանվող «կազմակերպություն» հասկացության մեջ:		
16.	Արկաղի Խաչատրյան	Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մաս	<< դ >> կետը հանել, քանի որ դրանում նշված 8-րդ կետը արդեն ուժը կորցրած է ճանաչվել:		Ընդունվել է
17.	Արկաղի Խաչատրյան	Նախագծի 23-րդ հոդված	Լրացնել նոր մաս, որով կսահմանվի Հաշտարարի գրասենյակի Խորհրդի կողմից Նախագծով նախատեսված կարգերի սահմանման ժամկետ (2020 թվականի սեպտեմբերի 1-ը)		Ընդունվել է
«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 55-րդ կետով. «55) ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի կողմից «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին»	Ընդունվել է	Ընդունվել է

			Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ծառայությունների մատուցումը:»:		
2.	Կառավարություն	նախագծի 4-րդ հոդված	<p>շարադրել հետևյալ խնբագրությամբ.</p> <p>«Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների վրա»:</p>	Ընդունվել է	Ընդունվել է